Կազմված է 04.07.2025թ. և բաղկացած է 24 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***

«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հոգաբարձուների խորհրդի

04.07.2025թ. կայացած նիստի որոշմամբ

(արձանագրություն թիվ 05/25)

Հիմնադրամի Գլխավոր տնօրեն՝

_______________

Ս. Սարգսյան

***ԳՐԱՆՑՎԱԾ Է***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 12.06.2003թ.

գրանցման համար 222.160.00131

ՀՎՀՀ՝ 03517269

08.06.2012թ. գրանցված կանոնադրության թիվ 002.3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից "15" 10 2025թ.

աշխատակից

_______________

# «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

## ՆԱԽԱԲԱՆ

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» Հայկական բարեգործական հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) հանդիսանում է ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, (այսուհետ նաև՝ Միջազգային կազմակերպություն), անդամ կազմակերպություն և ամբողջությամբ կիսում է ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության կանոնադրության նախաբանն ինչպես ներկայացված է ստորև.

ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպությունը, որպես սոցիալական զարգացման ուղղվածություն ունեցող անկախ ոչ պետական հասարակական կազմակերպություն, քայլեր է ձեռնարկում երեխաների շահերի պաշտպանության համար: Մենք հարգում ենք տարբեր կրոններ և մշակույթներ և գործում այն երկրներում և համայնքներում, որտեղ մեր առաքելությունը կարող է նպաստել զարգացմանը: Մենք աշխատում ենք ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ոգուն համապատասխան և նպաստում այդ իրավունքների իրացմանը:

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Մենք պաշտպանում ենք այն երեխաների և երիտասարդների իրավունքները, որոնք հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում, այդ թվում մնացել են առանց ծնողական խնամքի կամ գտնվում են մանկալքության վտանգի տակ: Մենք հավատում ենք, որ երեխաների և երիտասարդների ողջ ներուժը զարգացնելու համար լավագույն միջավայրը ընտանիքն է կամ ընտանեկանին մոտ պայմանները, որտեղ յուրաքանչյուր երեխա և երիտասարդ ունի հոգատար ծնող կամ այլընտրանքային խնամք իրականացնող խնամքը և դաստիարակությունն իրականացնելու համար: Մեր որոշումներում և գործողություններում երեխայի լավագույն շահը գերակա է մյուս բոլոր նկատառումներից: Մենք հասնում ենք դրան յուրաքանչյուր երեխայի և երիտասարդի կարիքներին անհատական արձագանք մշակելու միջոցով: Մենք խորհրդակցում ենք երեխաների և երիտասարդների հետ իրենց կյանքի վրա ազդող բոլոր որոշումների կայացման ընթացքում: Մենք աջակցում ենք ընտանիքին, համայնքին և պետությանը՝ ամրապնդելու երեխաներին, երիտասարդներին և ընտանիքներին աջակցելու իրենց կարողությունները: Մենք ձգտում ենք բարելավել մեր թիրախային խմբի երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների անդամների ընդհանուր պայմանները շահերի պաշտպանության գործողությունների միջոցով, որոնց նպատակն է փոփոխել այն քաղաքականությունները և գործելակերպը, որոնք խաթարում են երեխաների և երիտասարդների զարգացումը և իրավունքների իրացումը:

Առաջին ՍՕՍ Մանկական գյուղը հիմնադրվել է Հերման Գմայների կողմից Ավստրիայի Իմստ քաղաքում 1949 թվականին: Այն Հերման Գմայների ՍՕՍ Մանկական գյուղի կոնցեպտի համաշխարհային ներդրման մոդելն է, որը վերածվել է մի քանի տարբեր ծրագրերի և մոտեցումների՝ ապահովելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և երիտասարդների խնամքը և դաստիարակությունը հոգատար ընտանիքում: Հերման Գմայների ՍՕՍ Մանկական գյուղի կոնցեպտը հիմնված է չորս սկզբունքների վրա: Դրանք են մայրը (յուրաքանչյուր երեխա և երիտասարդ ունի հոգատար ծնող), քույրեր և եղբայրները

(ընտանեկան կապերը զարգանում են բնականոն կերպով), տունը (յուրաքանչյուր ընտանիք ստեղծում է իր օջախը) և գյուղը (ՍՕՍ ընտանիքը համայնքի մի մասն է):

Մեր տեսլականն է՝ «Յուրաքանչյուր երեխա պատկանում է ընտանիքին, մեծանում է սիրո, հարգանքի և անվտանգության մթնոլորտում»:

Մեր առաքելությունն է ապահովել երեխայի և երիտասարդների ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը և մանկալքության կանխարգելումը:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» Հայկական բարեգործական հիմնադրամը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղված և անդամություն չունեցող ոչ պետական, ոչ քաղաքական, ոչ կրոնական, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի բոլոր միջոցներն ու մնացորդներն օգտագործվելու են Հիմնադրամի նպատակների իրագործման համար:

1.2 Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0033, Երզնկյան փողոց 79 (այսուհետ Ազգային գրասենյակ): Հիմնադրամի իրավաբանական հասցեն է ք. Երևան, Հ. Քոչարի 8, բն. 18-19:

1.3 Հիմնադրամը հիմնադրվել է հիմնադիրների խորհրդի 10.01.2000 համար 01 որոշմամբ և հանդիսանում է «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» Հայկական բարեգործական ընկերակցության իրավահաջորդը, որի կանոնադրությունը գրանցված է եղել ՀՀ արդարադատության նախարարության 1998թ. մարտի 13- ի կոլեգիայի համար 10/17 որոշմամբ և որը վերակազմակերպվել է հիմնադրամի իր անդամների 10.01.2000թ ընդհանուր ժողովի թիվ 043 որոշմամբ:

1.4 Հիմնադրամի միակ հիմնադիրն է «ՍՕՍ-Քինդերդորֆ Ինտերնացիոնալ» Միջազգային հասարակական կազմակերպությունը, որը ոչ պետական, ոչ առևտրային, ոչ քաղաքական, ոչ կրոնական և բարեգործական կազմակերպություն է, և գործում է բացառապես ի նպաստ հասարակության շահերի: Միջազգային կազմակերպության գլխավոր գրասենյակի հասցեն է՝ Ավստրիա, ք. Վիեննա, Բրիգիտենաուէր լենդե փողոց 50:

1.5 Հիմնադրամը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի, իր և ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության նպատակներին ու քաղաքականության համաձայն, ինչպես նաև սույն Կանոնադրության հիման վրա:

1.6 Հիմնադրամը գործում է օրինականության, իրավահավասարության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

1.7 Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.8 Հիմնադրամն իրավասու է Հայաստանի Հանրապետության տարբեր վարչատարածքային միավորումներում ստեղծելու իր մասնաճյուղերը և իրականացնելու ծառայություններ և ծրագրեր, ինչպիսիք են՝ այլընտրանքային

խնամքի և ընտանիքի ամրապնդման ծառայությունները, շահերի պաշտպանությունը, մարդասիրական աջակցությունը, երեխաների և երիտասարդների, ինչպես նաև համայնքների հզորացմանն ուղղված ծրագրերը:

1.9 Հիմնադրամը իր բարեգործական նպատակներին հասնելու համար կարող է ունենալ միջազգային համագործակցություն և կապեր, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր տեղական, օտարերկրյա, միջազգային պետական և ոչ պետական, առևտրային և ոչ առևտրային անձանց և կառույցների հետ:

1.10 Հիմնադրամն ունի իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցման պահից, ունի իր անվամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով, որտեղ պատկերված են տղա և աղջիկ ծաղկի շուրջ (որն առանց հիմնադրի թույլտվության, մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից չի կարող օգտագործվել), անկյունադրոշմ, պաշտոնաթղթեր, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.11 Հիմնադրամի անվանումն է:

հայերեն՝ լրիվ՝ «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» Հայկական բարեգործական հիմնադրամ,

հայերեն՝ կրճատ՝ «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ,

ռուսերեն՝ լրիվ՝ Армянский благотворительный фонд «СОС - Детские Деревни»,

ռուսերեն՝ կրճատ՝ АБФ «СОС - Д.Д.»,

անգլերեն՝ լրիվ՝ SOS Children's Villages Armenian Charity Foundation,

անգլերեն՝ կրճատ՝ SOS CV ACF

1. 12 Հիմնադրամի հնարավոր և փաստացի շահառուներն են ծնողազուրկ երեխաները, ինչպես նաև այն երեխաները, ովքեր տարբեր պատճառներով չեն կարող ապրել իրենց ծնողների հետ, սոցիալական ռիսկի ենթակա երեխաները և նրանց ընտանիքների անդամները:

## 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

2.1 Հիմնադրամի նպատակները, խնդիրները և գործունեության ձևերը հետևյալն են՝

2.1.1 Հիմնադրել Հերման Գմայների կողմից ստեղված և Նախաբանում նշված ՍՕՍ-Մանկական գյուղերի՝ երեխայի ընտանեկնան տիպի խնամքի իրականացման մոդելին համաձայն ՍՕՍ-Մանկական գյուղեր և դրանց գործունեության միջոցով ցուցաբերել մասնագիտական խնամք և աջակցություն որբացած, լքված, ինչպես նաև այն երեխաներին, որոնց ընտանիքներն անկարող են խնամել նրանց՝ երեխաների համար ապահովելով օջախ, մայր, եղբայրներ և քույրեր և գյուղի համայնքային միջավայր:

2.1.2 ՍՕՍ-Մանկական գյուղի աշխատանքն իր շարունակությունը գտնում է ՍՕՍ-երիտասարդական ծրագրերում:

2.1.3. Երեխաների կարիքներին և ներուժին համապատասխան որակյալ կրթության

ապահովելու նպատակով աջակցել ՄՕՍ-ընտանիքներին և կազմակերպել հանդիպումներ նրանց հետ, երեխաներին և երիտասարդներին խորհրդատվություն տրամադրել, որպեսզի նրանք դաստիարակվեն առողջ և ապահով պայմաններում:

2.1.4. Պատերազմական կամ հետպատերազմյան ժամանակաշրջանում, ինչպես նաև բնական աղետների կամ այլ պատահարների դեպքում ցուցաբերել մարդասիրական օգնություն արտակարգ իրավիճակներում հայտնված մայրերին և երեխաներին:

2.1.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել և պահպանել պատշաճ կրթական, առողջապահական և այլ ստորաբաժանումներ, ինչպիսիք են ՄՕՍ-մանկապարտեզները, Հերման Գմայների անվան դպրոցները, ՄՕՍ-մասնագիտական ուսուցման կենտրոնները, ՄՕՍ-սոցիալական կենտրոնները և ՄՕՍ-երեխաների ու երիտասարդների, ինչպես նաև հարակից համայնքների կարիքավոր ընտանիքների երեխաների համար զարգացման, սոցիալական կամ կանխարգելման այլ ծրագրերը:

2.1.6. Նպաստել հանրային իրազեկության բարձրացմանը երեխաների կարիքների և իրավունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ: Աջակցել, քարոզել և հավատարիմ մնալ Միավորված ազգերի կազմակերպության «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիային և ՀՀ օրենսդրությանը:

2.1.7. Հայաստանի Հանրապետությունում ստեղծել ընտանիքի վրա հիմնված խնամքի մոդել, աջակցել այդ մոդելի իրականացմանը և ստեղծել համապատասխան տեղեկատվական շտեմարան:

2.1.8. Նպաստել երեխաների խնամքով զբաղվող տեղական կազմակերպությունների աշխատակիցների միջև գիտելիքի և փորձի փոխանակմանը և համագործակցել նրանց հետ:

2.1.9. Օրինակ ծառայել երեխայի զարգացման, սոցիալ-մանկավարժական, կրթական ոլորտներում և ղեկավարման պրակտիկայում նմանատիպ կազմակերպությունների համար: Համագործակցել այդ կազմակերպությունների հետ և կազմակերպել հանդիպումներ երեխայի խնամքի փորձի փոխանակման և համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

2.1.10. Ապահովել ՄՕՍ-մանկական գյուղի գաղափարների իրագործումը, ՄՕՍ կազմակերպության անունը բարձր պահելու նպատակով խթանել հասարակայնության հետ կապերի զարգացմանը զանգվածային լրատվության միջոցների և տեղեկատվության այլ միջոցներով:

2.2 Հիմնադրամն իր նպատակներին, ի թիվս այլոց, հասնում է հետևյալ կերպ՝

2.2.1 Օրենքով չարգելված ցանկացած տեսակի դրամական միջոցների հանգանակություն Հիմնադրամը ֆինանսավորելու նպատակով սույն կանոնադրությամբ սահմանված իր նպատակներին հասնելու համար:

2.2.2 Հիմնադրամի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով ֆոնդահայթայթման և հասարակության հետ կապերի ձևավորման տարբեր գործողությունների ձեռնարկում և դրանց արդյունքում ստացած միջոցների ծախսման ուղղությունների վերահսկում: Ֆոնդերը հիմնականում պետք է ձևավորվեն դրամական նվիրատվություններից, ՀՀ կամ միջազգային ֆիզիկական կամ իրավաբանական անձանց և/կամ կազմակերպությունների կողմից արված դրամական փոխանցումներից

և օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Բոլոր ֆինանսական միջոցները պետք է ծառայեն սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը:

2.2.3 Հանդիսանալով ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, ինչպես նաև ՍՕՍ Մանկական Գյուղերի համաշխարհային ֆեդերացիայի անդամ, և ենթարկվելով ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության կանոնադրությանն ու պարտադիր քաղաքականություններին և իրականացնելով ֆեդերացիայի իրավական մարմինների կողմից ընդունված որոշումներն ու միջոցառումները, այնքանով, որքանով դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը կամ միջազգային պայմանագրերին:

2. 2. 4 Մշակելով կանոնադրություն և Հիմնադրամի համար այլ պարտադիր փաստաթղթեր:

2. 2. 5 Ընտրելով և վերապատրաստելով անձնակազմ Հիմնադրամի ծրագրերի և գրասենյակների մասնագիտական գործունեությունը երաշխավորելու համար:

2. 2. 6 Իրականացնելով հասարակայնության հետ կապերի աշխատանք հրապարակումների, լուսաբանումների և տարբեր միջոցառումների տեսքով՝ Հիմնադրամի ծրագրերի և ծառայությունների ընդլայնման և խթանման նպատակով:

2.2.7 Պաշտպանելով և խթանելով ՍՕՍ Մանկական Գյուղերի ապրանքանիշը:

## 3. ՖԻՆԱՆՍՆԵՐ

3. 1 Հիմնադրամի միջոցները, որոնք ներառված են Հիմնադրամի ակտիվներում հետևյալն են՝

3.1.1 Մասնավոր և հանրային նվիրաբերությունները և ֆինանսական օժանդակությունները,

3.1.2 Մասնավոր կամ հանրային ֆոնդահայթհայթման միջոցով ստացված միջոցները,

3.1.3 Ժառանգությունները,

3.1.4 ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության կամ նրա անդամներից որևէ մեկի միջազգային փոխանցումներից ստացված միջոցները,

3.1.5 Հիմնադրամի բոլոր նյութական և ոչ նյութական ակտիվները, ներառյալ շարժական և անշարժ գույքը;

3.1.6 Պետական և ոչ պետական մարմինների կողմից հայտարարված մրցույթներում մասնակցության և հաղթող ճանաչվելու արդյունքում ձեռք բերված միջոցներ, ներառյալ շարժական և անշարժ գույքը:

3.2 Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված միջոցները, աղբյուրները:

3.3 Հիմնադրամը կարող է տնօրինել օրինական ճանապարհով ձեռք բերված ցանկացած գույք/սեփականություն, որն անհրաժեշտ է կանոնադրական նպատակներն իրականացնելու համար: Հիմնադրամի միջոցները պետք է օգտագործվեն բացառապես Հիմնադրամի նպատակներին հասնելու համար, ինչպես սահմանված է սույն կանոնադրությամբ:

3.4 Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրները, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

3.5 Հիմնադրամի ֆինանսական տարին օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածն է:

3.6 Յուրաքանչյուր ֆինանսական տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ կազմվում և հրապարակվում է տարեկան ֆինանսական հաշվետվություն, որը տարեկան մեկ անգամ աուդիտ է անցնում անկախ և ճանաչված արտաքին աուդիտորի կողմից՝ հավաստելու, որ այն ներկայացնում է Հիմնադրամի ֆինանսական վիճակի, դրա արդյունքների և դրամական հոսքերի «ճշմարիտ և արդար» տեսակետ, և որ բոլոր միջոցներն օգտագործվել են կանոնադրության և Հիմնադրամի իրավական մարմինների որոշումների համաձայն:

3.7 Հիմնադրամն ունի բանկային հաշիվներ, որոնցով ստացվում են տեղական և միջազգային եկամուտները և այլ վճարումներ, և որոնցից կատարվում են բյուջետային և ոչ բյուջետային փոխանցումները:

3.8 Հիմնադրամի հաշիվները գտնվում են Գլխավոր տնօրենի տնօրինության տակ: Ցանկացած հաշիվ պետք է ստորագրված լինի մեկից ավելի անձանց կողմից:

3.9 Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Հոգաբարձուների խորհուրդը պետք է հաստատի տվյալ ֆինանսական տարվա բյուջեն:

## 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1 «ՍՕՍ-Քինդերդորֆ Ինտերնացիոնալ» Միջազգային հասարակական կազմակերպության՝ որպես Հիմնադրամի միակ հիմնադրի իրավունքներն են.

4.1.1 Նշանակել Հոգաբարձուների խորհրդի անդամներին:

4.1.2 փոփոխություններ կատարել Հիմնադրամի կանոնադրության մեջ:

4.1.3 Հոգաբարձուների խորհրդից պարբերաբար տեղեկություններ ստանալ Հիմնադրամի հիմնական որոշումների մասին, այդ թվում՝ ռազմավարական ուղղության, խոշոր ֆինանսական պարտավորությունների և էական ազդեցություն ունեցող այլ հարցերի վերաբերյալ:

4.1.4 Ստանալ Հիմնադրամի տարեկան հաշվետվությունը և ռազմավարական ծրագիրը:

4.1.5 Ստանալ Հոգաբարձուների խորհրդից տարեկան հաշվետվություններ Հիմնադրամի գործունեության, ֆինանսական վիճակի և զարգացման վերաբերյալ:

4.2 Հիմնադրամի մարմիններն են.

4.2.1 Հոգաբարձուների խորհուրդը /կամ Խորհուրդ/,

4.2.2 Գլխավոր տնօրենը (կառավարիչը, հետագա տեքստում՝ Ազգային տնօրենը):

## 5. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

5.1 Հոգաբարձուների խորհուրդը կազմված է 7 (յոթ) անդամից: Խորհրդի անդամները, այդ թվում Հոգաբարձուների խորհրդի նախագահը (այսուհետ նաև՝ Նախագահ), ընտրության պահին պետք է լինեն 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, և չեն ստանալու որևէ վարձատրություն իրենց պաշտոնավարման համար:

5.2 Խորհրդի անդամները նշանակվում են Հիմնադրի կողմից 4 (չորս) տարի ժամկետով և կարող են վերընտրվել մեկ անգամ:

5.3 Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

- Հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
- նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.
- լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.
- եթե դադարել են Հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
- նրա մահվան դեպքում.
- եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

5.4 Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Ազգային տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Ազգային տնօրենը տեղեկացնում է հիմնադիրներին, հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

5.5 Հոգաբարձուների խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

5.6 Հոգաբարձուների խորհրդի նիստը հրավիրում և վարում է Նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում խորհրդի մեկ այլ անդամ՝ ընտրված խորհրդի մյուս անդամների կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7 Հոգաբարձուների խորհրդի նիստ կարելի է հրավիրել նաև էլեկտրոնային կամ հաղորդակցության այլ միջոցներով:

5.8 Հոգաբարձուների խորհրդի անդամներին նիստի մասին պետք է գրավոր տեղեկացնել նիստից 1 (մեկ) շաբաթ առաջ:

5.9 Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հոգաբարձուների խորհրդի նախագահի

կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե Նախագահը նիստ չի գումարում նշված ժամկետում, նիստը կարող են գումարել նիստի գումարման պահանջ ներկայացրած անձինք:

5.10 Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

5.11 Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ գլխավոր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, հիմնադրամի անվանման փոփոխության, կանոնադրության փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման որոշումների, որոնք ընդունվում են Հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.12 Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից որևէ մեկը, բայց ոչ Նախագահը: Հոգաբարձուների խորհրդի նախագահի որոշմամբ նիստերը կարող է արձանագրել Ազգային տնօրենը: Արձանագրությունները ստորագրում են (նաև էլեկտրոնային ստորագրությամբ) նիստի քարտուղարը և Նախագահը:

5.13 Ազգային տնօրենը կարող է ներկա գտնվել Հոգաբարձուների խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, առանց քվեարկության իրավունքի: Եթե Հոգաբարձուների խորհուրդն անհրաժեշտ է համարում, ապա որևէ այլ աշխատակից ևս կարող է առանց քվեարկության իրավունքի մասնակցել Հոգաբարձուների խորհրդի նիստերին:

5.14 Հիմնադրամի գործունեությանն առնչվող ցանկացած փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Հիմնադրամի կանոնադրությունը, պետական գրանցամատյանից քաղվածքը, արձանագրությունները, Խորհրդի անդամների ցուցակները կամ կնիքը և այլն, պահվում են Հիմնադրամի Ազգային գրասենյակում:

5.15 Հոգաբարձուների խորհրդի իրավասությունները.

5.15.1 Սահմանել Հիմնադրամի հիմնական ուղղություններն ու ռազմավարությունը՝ ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության ռազմավարական նպատակներին և առաքելությանը համահունչ և հաստատել Հիմնադրամի ռազմավարական ծրագիրը:

5.15.2 Հաստատել Հիմնադրամի բյուջեն և նրա փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները,

5.15.3 Հաստատել Հիմնադրամի գույքի տնօրինման կարգը, վերահսկել Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը,

5.15.4 Որոշում ընդունել Հիմնադրամի վերակազմակերպման վերաբերյալ,

5.15.5 Որոշում ընդունել Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին, նշանակել Հիմնադրամի լուծարման հանձնաժողովին (լուծարողին), սահմանել

լուծարման կարգն ու ժամկետները, հաստատել լուծարման միջանկյալ հաշվեկշիռը, լուծարման հաշվեկշիռը,

5.15.6 Որոշում ընդունել Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

5.15.7 Ընտրել/ազատել Հոգաբարձուների խորհրդի նախագահին Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Նախագահի ազատումը չի ազդում նրա որպես Խորհրդի անդամի կարգավիճակի վրա, մինչդեռ որպես Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը ավտոմատ կերպով դադարեցնում է նաև նրա որպես Նախագահի լիազորությունները

5.15.8 Քննարկել հաշվեկշիռները և հաստատել Հիմնադրամի նախորդ տարվա գործողությունների պլանի առաջընթացի վերաբերյալ Ազգային տնօրենի հաշվետվությունը:

5.15.9 Վերահսկել իր որոշումների կատարման ընթացքը,

5.15.10 Հաստատել Հիմնադրամի կառուցվածքը և հաստիքացուցակը,

5.15.11 Որոշումներ կայացնել Հոգաբարձուների Խորհրդի անդամների կամ Ազգային տնօրենի կողմից ներկայացված ցանկացած այլ հարցի վերաբերյալ:

5.15.12 Նշանակել/աշխատանքից ազատել Ազգային տնօրենին, ինչպես նաև նրա համար սահմանել պարտականությունների մանրամասն նկարագրություն:

5.15.13 Քննարկել և հաստատել Ազգային տնօրենի կողմից ներկայացված Հիմնադրամի տարեկան պլանը և բյուջեն:

5.15.14 Հաստատել Հիմնադրամի ընդհանուր ռազմավարությունը, ինչպես նաև քաղաքականությունները, կանոնակարգերը, ուղեցույցները, Ազգային գրասենյակի աշխատանքի կանոնակարգերը, Ազգային տնօրենի կողմից ներդրված աշխատավարձի սանդղակները և աշխատանքային պայմանները:

5.15.15 Վերահսկել Հիմնադրամի կանոնադրության և կանոնակարգերի համապատասխանությունը և ապահովել Հիմնադրամի արդյունավետ կառավարումը:

5.15.16 Տարին մեկ անգամ լսել գլխավոր տնօրենի հաշվետվությունները:

5.15.17 Իրականացնել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ գործառույթներ:

## 6. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

6.1 Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ 4 (չորս) տարի ժամկետով և կարող է վերընտրվել մեկ անգամ:

6.2 Հոգաբարձուների խորհրդի Նախագահի պարտականությունները.

6.2.1 Կազմակերպել Հոգաբարձուների Խորհրդի աշխատանքները, գումարել և նախագահել Հոգաբարձուների խորհրդի նիստերը:

6.2.2 Կազմակերպել նիստերի արձանագրության վարումը:

6.2.3 Ներկայացնել առաջարկ Հոգաբարձուների Խորհրդին Ազգային Տնօրեն նշանակելու վերաբերյալ:

6.3 Եթե Նախագահը բացակայում է, ապա Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ նրա պարտականությունները ստանձնում է անդամներից մեկը:

## 7. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՕՐԵՆԸ

7.1 Հիմնադրամի Ազգային տնօրենը նշանակվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ և ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը:

7.2 Հիմնադրամի Ազգային տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն Կանոնադրությամբ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և վերջինիս հետ կնքած պայմանագրով: Պայմանագիրը Հիմնադրամի անունից ստորագրում է Նախագահը կամ Հոգաբարձուների խորհրդի կողմից լիազորված Խորհրդի մեկ այլ անդամ:

7.3 Հիմնադրամի նպատակներն ու խնդիրները կյանքի կոչելու համար Ազգային տնօրենը, որպես Հիմնադրամի գործադիր մարմին, պետք է իրականացնի հետևյալ գործառույթները՝ գործարքները կատարելիս միշտ ղեկավարվելով «չորս աչք» սկզբունքով:

7.3.1 Տնօրինել Հիմնադրամի ակտիվները, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ կնքել Հիմնադրամի անունից, ինչպես նաև ապահովել Հիմնադրամի ֆինանսական միջոցներն արդյունավետ և ըստ պատշաճի օգտագործումը՝ համաձայն սույն Կանոնադրության և Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված բյուջեի, ինչպես նաև հաստատված ներքին քաղաքականությունների ու ստանդարտների:

7.3.2 Ներկայացնել Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում: Առանց լիազորագրի ներկայացնել Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև պաշտոնական հանդիպումների ժամանակ:

7.3.3 Գործել առանց լիազորագրի, իր իրավասության սահմաններում տալ լիազորագրեր:

7.3.4 Սահմանված կարգով կնքել պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային:

7.3.5 Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել Հիմնադրամի ռազմավարությունը, տարեկան պլանը և բյուջեն, աշխատանքային ներքին կանոնակարգերը, հայեցակարգերը և քաղաքականությունները, հաստիքացուցակը, Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հաստատությունների, ծրագրերի և Հիմնադրամի ստեղծած մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը:

7.3.6 Իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, հրահանգներ, տալ կարգադրություններ և վերահսկել դրանց կատարումը:

7.3.7 Աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

7.3.8 Հոգաբարձուների խորհրդի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով, առանց քվեարկության իրավունքի և Հոգաբարձուների խորհրդի քննարկման ներկայացնել ցանկացած հարց:

7.3.9 Հանդիսանալ լրիվ դրույքաչափով աշխատակից: Նա Ազգային գրասենյակի գործադիր պաշտոնատար անձն է, և պատասխանատվություն է կրում ամենօրյա հարցերի ղեկավարման համար:

7.3.10 Ազգային տնօրենը հանդիսանում է Հիմնադրամի ողջ աշխատակազմի ղեկավարը, և որպես այդպիսին, նա պարտավոր է ապահովել, որ աշխատակազմի հաստիքացուցակը համալրված լինի: Նա է որոշումներ կայացնում աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատելու վերաբերյալ:

7.3.11 Կազմակերպել Հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

7.3.12 Բանկերում բացել հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ, ստորագրել բանկային փոխանցումների փաստաթղթերը միայն իր կողմից լիազորված Հիմնադրամի այլ աշխատակցի հետ համատեղ:

## 8. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

8.1 Հիմնադրամի ներկայացուցչությունը ապահովում է Ազգային տնօրենը: Ազգային տնօրենի բացակայության դեպքում ներկայացուցչությունն ապահովում է նրա կողմից լիազորված անձը:

## 9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

9.1 Այն դեպքերում, երբ Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամը, Ազգային տնօրենը, աշխատողը կամ նրանց հետ փոխկապակցված անձինք զույքային կամ անձնական շահ ունեն Հիմնադրամին վերաբերող հարցում, տվյալ անձը պետք է

ա) ամբողջությամբ և բացահայտ կերպով հայտարարի շահի մասին,

բ) իսկ համապատասխան խորհրդի անդամը հրաժարվի խնդրի առարկա հանդիսացող հարցի քննարկումից և քվեարկությունից:

9.2 Փոխկապակցված անձինք են համարվում ծնողները, ամուսինները, ներառյալ կողակիցները, զավակները, եղբայրները, քույրերը, ամուսնու ծնողները, զավակները, եղբայրները և քույրերը:

9.3 Հոգաբարձուների խորհրդի ցանկացած որոշում, որը ներառում է շահերի հավանական բախում, հաստատվում է միայն այն դեպքում, երբ Հոգաբարձուների խորհրդի անշահախնդիր անդամների մեծամասնությունը որոշում է, որ դա բխում է Հիմնադրամի լավագույն շահից: Նիստերի արձանագրությունները, որոնցում անցկացվում են նման քվեարկություններ, պետք է արտացոլեն բախման բացահայտումը, ձեռնպահ քվեարկությունը և Խորհրդի որոշման հիմնավորումը:

## 10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Հիմնադրամի մասնաճյուղերի/ստորաբաժանումների ստեղծման կամ վերակազմակերպման, ինչպես նաև նրանց գործունեության դադարեցման վերաբերյալ որոշումները կայացնում է Հոգաբարձուների խորհուրդը: Նման մասնաճյուղերը/ստորաբաժանումները կարող են օժտված լինել առանձնացված ստորաբաժանման իրավունքներով, այսինքն կարող են ունենալ իրենց բանկային հաշիվները, կնիքները և այլ ռեկվիզիտներ: Նշված մասնաճյուղերի/ստորաբաժանումների ղեկավարներն ընտրվում, աշխատանքի են ընդունվում և աշխատանքից ազատվում են Ազգային տնօրենի որոշմամբ:

10.2 Հիմնադրամի ստորաբաժանումներն իրենց գործունեությունն իրականացնելիս պետք է հավատարիմ մնան Հայաստանի Հանրապետության օրենքներին, սույն Կանոնադրությանը, ինչպես նաև իրենց ներքին ընթացակարգերին և կանոնակարգերին:

10.3 Մասնաճյուղերի/ստորաբաժանումների գործունեությունը ղեկավարվում/վերահսկվում է Հիմնադրամի կողմից՝ ի դեմս Խորհրդի, և այն պետք է համապատասխանի Հիմնադրամի վերը նշված նպատակներին:

## 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Ցանկացած վեճ, որը ծագում է Հիմնադրամի և Հոգաբարձուների խորհրդի անդամների, Հիմնադրամին աջակցություն ցույց տվող անձանց միջև, նախևառաջ պետք է լուծվի ներքին կարգով՝ բարեխիղճ բանակցությունների միջոցով:

11.2 60 օրվա ընթացքում ներքին կարգով համաձայնության չգալու դեպքում կողմերը կարող են վեճը փոխադարձ գրավոր համաձայնությամբ հանձնել Հայաստանի Հանրապետության արբիտրաժային դատարան:

11.3 Եթե կողմերը համաձայնել են վեճը հանձնել ՀՀ արբիտրաժային դատարան, ապա վերջինիս որոշումը վերջնական է, պարտադիր և ՀՀ օրենսդրությամբ կատարման ենթակա:

11.4 Արբիտրաժի հարցում համաձայնության չգալու դեպքում վեճը ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանների կողմից գործող օրենսդրությանը համապատասխան:

## 12. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12.1 Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի միացման և միաձուլման ձևով Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների միաձայն որոշմամբ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

12.2 Հիմնադրամի լուծարման որոշումը կայացվում է Խորհրդի բոլոր անդամների միաձայն որոշմամբ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

12.3 Հիմնադրամը լուծարելու մասին որոշումը կարող է ընդունել միայն դատարանը՝ Խորհրդի և շահագրգիռ անձանց դիմումով:

12.4 Հիմնադրամի լուծարման մասին դատարանի կողմից որոշում ընդունելուց հետո Խորհուրդը ստեղծում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

12.5 Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

12.6 Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

12.7 Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած պետական գրանցման պահից:

12.8. Հիմնադրամը լուծարվում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

"ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ"

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## STATUTES FOR

## SOS CHILDREN'S VILLAGES

## ARMENIAN CHARITY FOUNDATION

(new edition)

### PREAMBLE

SOS Children's Villages Armenian Charity Foundation (hereinafter also, the Foundation) is a member of SOS Children´s Villages International (hereinafter also, the International organization) and fully subscribes to the preamble of the statutes of SOS Children´s Villages International, as follows:

SOS Children's Villages International takes action for children as an independent non-governmental social development organisation. We respect different religions and cultures, and we work in countries and communities where our mission can contribute to development. We work in the spirit of the UN Guidelines for the Alternative Care of Children and the United Nations Convention on the Rights of the Child and we promote these rights.

### OUR PROGRAMME PRINCIPLES

